քը տղամարդի գործ չէ, ասում է վանեցին, այլ այն ժամանակի տկար կնոջ ձեռքի գործն է: Մայրը տոել է այն ահագին քարերը աղջկան, եւ աղջիկը, մօր ձեռքից առնելով, շարել է միմեանց վրայ:

Երբ այդ աւանդութեան մասին հարցրի Ասլանից, նա պատասխանեց.

— Երեւում է, որ ամենահին ժամանակներում մի կին թագաւոր Վանի մէջ եւ կամ նրա շրջակայքում մեծ գործեր է կատարել: Այդ միմեանց վրայ շարած քարերը, որ տեսանք, ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ փշրանքները այն հսկայական ամբարտակի կամ պատնէշի, որ մի ժամանակ կառուցել է ծովի աճելու առաջն առնելու համար, որ չմօտենան քաղաքին: Խորենացին այս ամբարտակի կառուցումը վերաբերում է Շամիրամին, որ գործ է դրել նրա շինութեան վրայ 12 հազար բանորներ եւ 6 հազար արհեստաւորներ: Բայց Խորենացու նկարագրութիւններից երեւում է, որ նա Վանը կամ ամենեւին չէ տեսել, կամ մի ժամանակ տեսել է, բայց իր պատմութիւնը գրելու միջոցին շատ բան մոռացել է: Եթէ Խորենացին հետեւած լինէր ժողովրդի մէջ պահպանուած աւանդութիւններին, նա ամենեւին այդ բոլոր մեծագործութիւնները Շամիրամին չէր վերաբերի, այլ մի թագուհու, որ տեղային ժողովրդից էր: Այսօր ժողովուրդը մոռացել է այդ թագուհու անունը, բայց նրա գործը դեռ յիշում է: Նա ասում է. այդ քարերը մի աղջիկ է շարել միմեանց վրայ: Բայց Խորենացու ժամանակ, եթէ նա դիմած լինէր ժողովրդին, նրան կասէին, թէ ով էր այդ աղջիկը:

Ծովը մեր առջեւն էր: Միջօրէի պայծառ արեգակի լուսաւորութեան ներքոյ սքանչելի տեսարան էր ներկայացնում նա: Նրա բարձր նկարչական եզերքը, պատած թուփերով եւ կանաչազարդ խոտերով, կամաց-կամաց ցած էին իջնում, միախառնւում էին ջրերի պարզ-կապուտակութեան հետ եւ, կազմելով մի հրաշալի պատկեր, կարծես ձգտում էին մրցել երկնքի ֆերուզայի գոյն յստակութեան հետ: Սիփանը, ծովը շրջապատող լեռներից ամենաբարձրը, երեւում էր իր վեհափառ գագաթով: «Վարդապետիկների» (կիւ-կեօ՛ւների՛) ուրախ երամը, սուր վեղարները գլխներին, աղմկում էին օդի խաղաղութիւնը իրանց զիլ ձայներով: Ջրերի խորքերից, կիսալուսնաձեւ թեւիկներով, թռչում էին նրանք դէպի ափերը: Այդ ուրախ, մշտազարթ թռչունները կարծես այն աբեղաների ոգիները լինէին, որոնք, ձանձրացած իրանց մռայլ խուցերի տխրութիւնից, թողել էին Կտուց անապատի կղզին եւ սլանում էին դէպի աշխարհ, դէպի կեանքը, դէպի մարդկութիւն...

Իսքալէ-կափուսիից մենք անցանք Աւանց գիւղը: Այդ գիւղը գտնւում է քաղաքի արեւմտեան կողմում, ծովի ափի մօտ, եւ նրա նաւահանգիստն է: Այստեղից քաղաքը ջրային հաղորդակցութիւն ունի Մուշի, Բաղէշի եւ այլ